ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԴԱՇՏԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 6

2015 թ-ի դեկտեմբերի 8-ին կայացավ Արարատի մարզի Դաշտաքար համայնքի ավագանու նիստ:

Նախագահությամբ՝ Ն. Մալխասյանի

Քարտուղարությամբ՝ Թ. Պետրոսյանի

Նիստին մասնակցում էին ավագանու հինգ անդամներից հինգը՝

Աբրահամ Աբրահամյան

Լյուդվիգ Այնազյան

Արմեն Աթոյան

Արամ Մալխասյան

Արտակ Օհանյան

Օրակարգը

1. *2016թ տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին*

1.Լսեցին– 2016թ տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին (զեկուցող՝ Ն. Մալխասյան)

Համաձայն «Տեղական տուրքերի և վճարների մասին» << օրենքի 8-րդ, 10- րդ, 11- րդ հոդվածների՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

1. << օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի,

շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է հիմնական օբյեկտների համար՝

ս) Մինչև 300 քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար տեղական տուրքը սահմանվում է 5000 դրամ;

բ) Սույն կետի "ա" ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

1. 201 – ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար տեղական տուրքը սահմանվում է 5000 դրամ:
2. 501 –ից մինչև 1000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար տեղական տուրքը սահմանվում է 5000 դրամ:
3. 1001-ից ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար տեղական տուրքը սահմանվում է 10 000 դրամ:

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) Մինչև 20 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների տեղական տուրքը սահմանվում է 3000 դրամ:

դ) 20 և ավելի քառակուսի – մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 5000դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5000դրամ:
3. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

ա) Ոգելից խմիչքների վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում թույլտվության համար յուրաքանչյուր եռամսյակի համար 1300 դրամ:

բ) Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում թույլտվության համար յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է 1500 դրամ:

4. Համայնքի տարածքում բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ
5. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 1000դրամ;

Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայությունն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 5000 դրամ

Օրենքի 10-րդ հոդվածի 1, 2, 3 կետերով սահմանված դրույքաչափերը համայնքում հաշվարկվում են 0.5 գործակցի կիրառմամբ:

Տեղական վճարներ

Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության

ավարտը փաստագրելու համար մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանվում է 1000 դրամ:

Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար ՏԻՄ մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանվում է 1000 դրամ:

Համայնքի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանվում է 1000 դրամ:

Աղբահանության վճարի դրույքաչափը սահմանել համայնքում փաստացի բնակվող յուրաքանչյուր 1 անձի համար ամսական 100 .0 դրամ

Որոշումն անցավ միաձայն.

Աբրահամ	Աբրահամյան	
Լյուդվիգ	Այնազյան	
Արմեն	Աթոյան	
Արամ	Մալխասյան	
Արտակ	Օհանյան	

Ավագանու նիստը համարվում է փակված:

Համայնքի ղեկավար՝ Ն. Մալխասյան

Քարտուղար ժ/պ՝ Թ. Պետրոսյան